Ազգային դրամի 30-ամյակին նվիրված 10, 20, 50, 100, 200, 500 դրամ անվանական արժեքով շրջանառու հիշատակային մետաղադրամների դիմերեսի էսքիզները հաստատելու մասին

2022-07-12

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհուրդ

Որոշում թիվ 116 Ա
12.07.2022

Ազգային դրամի 30-ամյակին նվիրված 10, 20, 50, 100, 200, 500 դրամ անվանական արժեքով շրջանառու հիշատակային մետաղադրամների դիմերեսի էսքիզները հաստատելու մասին

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» և «է» կետերը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2022 թվականի փետրվարի 8-ի թիվ 01 ԱԳ որոշումը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո ր ո շ ու մ է .

Հաստատել Ազգային դրամի 30-ամյակին նվիրված 10, 20, 50, 100, 200 և 500 դրամ անվանական արժեքով շրջանառու հիշատակային մետաղադրամների դիմերեսի էսքիզները՝ համաձայն սույն որոշման Հավելվածի:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով:

Հավելված

Հայաստանի Հանրապետության

կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

2022թ. հուլիսի 13, ք. Երևան